https://doi.org/10.52027/18294685-hle2024.1

ԵԴԻԳԱՐՅԱՆ ԼՈՒՍԱԲԵՐ
Հնաբերդի միջնակարգ դպրոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՎԻՔԻՊԵԴԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ Վիքիպեդիա, Հայաստանի ազգային գրադարան, գրադարան, գրադարանավար, վիքիգրադարանավար, հանդես, հոդված, ուսանող, շտեմարան:

Keywords: Wikipedia, National Library of Armenia, library, librarian, wiki librarian, journal, article, student, database.

Ինտերնետային ամենահայտնի հանրագիտարանը՝ Վիքիպեդիան, գոյություն ունի արդեն քսաներեք տարի: Վիքիպեդիան հանրագիտարան է, որը ստեղծվել և զարգանում է մեզ նման այցելուների կողմից: Այստեղ գործում է «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի համար» սկզբունքը:

Վիքիպեդիան առաջնորդվում է հիմնարար սկզբունքներով, իսկ բովանդակությունը հրապարակվում է Creative Commons BY-SA արտոնագրի ներքո: Այն կարելի է պատճենել և օգտագործել՝ պահպանելով սույն արտոնագրի պայմանները: Վիքիպեդիայում ողջ տեղեկատվությունը ներկայացված է ազատ, առանց գովազդի և իր օգտագործողների անձնական տվյալների օգտագործման:

Վիքիմեդիան հանրագիտարանային գիտելիքների տարածմանն աջակցող գիտակրթական հասարակական կազմակերպություն է: Դա նշանակում է, որ հոդվածի հեղինակ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք: Այն նաև ռազմավարական ծրագիր է, որն ունի իր առաքելությունը և խնդիրները: Վիքիմեդիան՝ համագործակցելով Հայաստանյան տարբեր գիտակրթական կազմակերպությունների հետ, ստեղծում է գիտելիքների պաշարը և հասանելի դարձնում հանրությանը: Նրա նպատակն է.

1. Ստեղծել և տարածել ազատ և հասանելի բովանդակություն,
2. Նպաստել գիտելիքի տարածմանը և կրթության զարգացմանը,
3. Խթանել կամավորական սկզբունքներով համագործակցությունը,
4. Ներգրավել հասարակության ավելի լայն շերտեր՝ վիքիբովանդակության ստեղծման գործում,
5. Հարստացնել վիքիպլատֆորմը՝ տեղայնացված և ընդլայնված գործիքաշարերով:

Սրանք համահունչ են նաև Հայաստանի ազգային գրադարանի նպատակներին: Այն Հայաստանի գլխավոր գրադարանն է՝ գիտակրթական, մշակութային, տեղեկատվական խոշոր հաստատություն, որը հավաքում, պահպանում և սպասարկում է տպագիր արտադրանքի տարբեր տեսակներ (գիրք, ամսագիր, թերթ, բրայլյան գրեր, քարտեզ, պլակատ, ատենախոսություն, նոտա, ձայնապնակ, դրամանիշ, բացիկ, բուկլետ, բրոշյուր և այլն): Ազգային գրադարանը գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական, միջգրադարանային բաժնույթի, տեղեկատվության և գրքափոխանակության, տպագիր արտադրանքի թվայնացման համապետական կենտրոն է:

Գրադարանները և գրադարանային թեմաները բավարար չափով ներկայացված չեն հայկական Վիքիպեդիայում: Առանձին հոդվածներով ներկայացված են միայն խոշոր ազգային, ակադեմիական գրադարանները, ինչպես նաև մարզային գրադարանները, սակայն հայ գրքի պատմությանը, գրադարանային գործին, ընթերցանությանը վերաբերող նյութերի զգալի պակաս կա: Մինչդեռ գրադարանների համար շատ օգտակար է ներկայացված լինել Վիքիպեդիայում: Երբ գրադարանը Վիքիպեդիայում իր մասին գրված հոդված ունի, ապա նրա տեսանելիությունն ավելի բարձր է, քան այն գրադարաններինը, որոնք ներկայացված չեն Վիքիպեդիայում: Գրադարանների համար շատ օգտակար է ներկայացված լինել Վիքիպեդիայում: Ներկայումս Վիքիպեդիայում առանձին հոդվածով ընդամենը ՀՀ 26 գրադարան է ներկայացված, ինչպես նաև 4 գրադարան Արցախից:

Քանի որ ամեն ոք կարող է մասնակցել Վիքիպեդիայի բովանդակության ստեղծմանը, հանրության մեջ որոշակի անվստահություն կա Վիքիպեդիայի հոդվածների նկատմամբ: Ուսումնական հաստատություններում դասավանդողները ուսանողներին հետ են պահում Վիքիպեդիայի նյութերի օգտագործումից: Ուսանողները դրանք չեն կարող ընդգրկել իրենց գրավոր աշխատանքների օգտագործած գրականության ցանկերում: Չենք խոսում հետազոտական աշխատանքների մասին, որոնցում Վիքիպեդիայի հոդվածների օգտագործումն անգամ չի էլ դիտարկվում: Ուստի շատ գրադարանավարներ իրենց աշխատանքում անտեսում են Վիքիպեդիայի նյութերի օգտագործումը և ընթերցողներին հետ են պահում Վիքիպեդիայի հոդվածների օգտագործումից: Այդ մոտեցումը շատ սխալ է և հարկավոր է փոխել: Վիքիպեդիան անընդհատ փոփոխվող մի հանրագիտարան է, որը կարող է և պետք է օգտագործվի առնվազն որևէ թեմայի վերաբերյալ առաջնային կամ սկզբնաղբյուր նյութեր գտնելու համար: Ընթերցողներին կարելի է ուղղորդել իրենց հարկավոր տեղեկությունը փնտրել Վիքիպեդիայում՝ ստացված տվյալները տպագիր հրատարակությունների միջոցով ճշտելու պայմանով:

Վիքիմեդիայի հետ համագործակցության նպատակն էր Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների և հայերեն Վիքիպեդիայի միջև կապերի խորացումը, որպեսզի Վիքիպեդիայում ավելի արժանահավատ և որակյալ տեղեկատվություն գրվի և տարածվի գրադարանների և գրադարանային գործի վերաբերյալ: Հույս ունենք, որ Ազգային գրադարանի այս նոր նախաձեռնությունը վարակիչ կլինի մեր գործընկերների համար, ովքեր կարող են Վիքիպեդիայում լրացնել իրենց տեղական պատմությունները, հոդվածներ գրել իրենց համայնքների մարդկանց և պատմության վերաբերյալ, ինչպես նաև իրենց համայնքներում օժանդակել տեղեկատվական գրագիտությանը:

Ինչո՞ւ է գրադարանավարի համար կարևոր Վիքիպեդիայի մասին իմացությունը: Որովհետև այն ամենից հաճախ գործածվող 5 կայքերից մեկն է (2024 թ. տվյալներով): 2001 թ. ստեղծման տարում այն հասանելի էր միայն անգլերենով, իսկ ներկայում արդեն ստեղծվել են 329 այլ լեզուներով տարբերակներ: Վիքիպեդիայի բոլոր լեզուները համադրված ներառում են ավելի քան 62 միլիոն հոդվածներ: 2023 թվականի նոյեմբերի դրությամբ ամսական կատարվում էր ավելի քան 14 միլիոն խմբագրում (միջինում մոտ 5.2 խմբագրում վայրկյանում): Առ 5 մայիսի 2024 թ. հայերեն Վիքիպեդիայում կար 308.408 հոդված:

2023 թվականին ազգային գրադարանի տնօրինության և «Վիքիպեդիա Հայաստան» կազմակերպության համագործակցությամբ Հայաստանի ազգային գրադարանը նախաձեռնեց գրադարանային թեմաներով հոդվածների լրացում հայերեն Վիքիպեդիայում: Կամավորները նախ երկօրյա դասընթացի մասնակցեցին, որի նպատակն էր գրադարանավարներին Վիքիպեդիայում հայերեն հոդվածներ հրապարակելու և խմբագրելու հմտություններ ուսուցանելը և այդպիսով առցանց տիրույթում հայկական գրադարանների և գրադարանավարների մասին հայերեն բովանդակության հարստացմանը նպաստելը:

Ազգային գրադարանը հարուստ տեղեկատվական պաշարներ ունի և, ենթադրվում էր, շատ արագ կկարողանար հոդվածներ ստեղծել: Գրադարանավարի համար նյութ գտնելն

այդքան էլ բարդ չէ: Իրական բարդությունը վիքի գործիքներին տիրապետելն է և գրագետ, համապատասխան չափորոշիչներով հոդված պատրաստելը, այսինքն՝ պետք է ունենալ տեքստ, հավաստի աղբյուրներ, հղումներ և հոդվածին վերաբերող սեփական կամ հանրային տիրույթում գտնվող լուսանկար: Վիքի ուսուցման առաջին դասընթացի ժամանակ տեղադրվեց Ներսես Հայրապետյանի «Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնության» (ԻՖԼԱ) հոդվածը [Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնություն, Վիքիպեդիա]: Այն միջազգային գրադարանային կազմակերպություն է, որին Հայաստանը անդամակցում է 1996 թվականից: Հայաստանի ազգային գրադարանը անդամակցում է ԻՖԼԱ-ին 2006 թվականից: Ի դեպ 2022 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» միջազգային գրադարանային գիտաժողովը, որը նվիրված էր հայ գրատպության 510-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էր ԻՖԼԱ նախագահ Բարբարա Լիզոնը, ով ելույթ ունեցավ «XXI դարի երկրորդ տասնամյակի գրադարանների մարտահրավերները և ինչպես է ԻՖԼԱ-ն նրանց աջակցում» խորագրով զեկույցով:

Առաջնահերթ համարվեց ազգային գրադարանի պատմության էջը լիարժեք դարձնել: Ազգային գրադարանի հինգ տնօրենները (Ազատ Մարտիկյան (1931-1936), Թեմզա Զաքարյան (1936-1937), Աղավնի Ստեփանյան (1937-1953), Արմենակ Միրզոյան (1953-1956), Արազի Թիրաբյան (1956-1989)) [Մելյան, 2002, 34, 39, 60, 65, 80] Վիքիպեդիայում ոչ մի տեղեկատվական նյութ չունեին: Վիքիգրադարանավարների համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվեցին ՀԱԳ-ի նախկին տնօրենների հոդվածները: ՀԱԳ-ի առաքելություններից է «Հայ գիրք» շտեմարանի և «Հայ մամուլ» շտեմարանի արատացոլումը Վիքիպեդիայում.

- ✓ **«Հայ գիրք» շտեմարանը** Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային համահավաք շտեմարանն է, որն ստեղծվել է 2012 թվականին: Այն նպատակ ունի ամբողջական թվային ձևաչափով ներկայացնելու հայ գրքի պատմությունը, գրքերի բովանդակությունը հանրահասանելի դարձնելու՝ այսպիսով նպաստելու հայատառ տպագիր ժառանգության, տպագիր արտադրանքի պահպանմանն ու հարստացմանը: Այն ներառում է 1512 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծայերում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն ելից տվյալներ պարունակող հայկական բովանդակությամբ, և հայերեն ելից տվյալներ պարունակող ու հայ հեղինակների կողմից ստեղծված այլալեզու գրքերը: Շտեմարանում տեղ են գտել նաև երկլեզվյան ու բազմալեզվյան այն հրատարակությունները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է (ատլաս, կատալոգ, պատկերագիրք, բառարան), ինչպես նաև 1512-1800 թթ. հրատարակված քարտեզները, հմայիլները, պարբերականները և հայատառ հատվածներ պարունակող այլալեզու հրատարակությունները [«Հայ գիրք» շտեմարան, Վիքիպեդիա]:
- ✓ **«Հայ մամուլ» շտեմարանը** հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակն է, <u>Հայաստանի ազգային գրադարանի</u> էլեկտրոնային շտեմարաններից մեկը: Հիմնադրվելով 2014 թվականին՝ շտեմարանը նվիրվել է հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայման 220-ամյակին (1794-2014 թթ.) և հայ խմբագիրներին: Շտեմարանում ներառված է 1794 թվականից մինչև մեր օրերը հրատարակված պարբերականների ավելի քան 6500 գրառում՝ թերթ, ամսագիր, էլեկտրոնային թերթ, էլեկտրոնային ամսագիր, տարեգիր, տեղեկագիր՝ 7.5 միլիոնից ավելի թվայնացված էջ: Գրացուցակում ներկայացված են ոչ միայն հայերեն, այլև հայատառ թուրքերեն, հայատառ ասորերեն, լատինատառ հայերեն, երկլեզվյան և բազմալեզվյան պարբերականներ, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է: Շտեմարանի կարևոր մաս են կազմում նաև օտարալեզու հայագիտական հանդեսները, ինչպես նաև խմորատիպ, ապակետիպ, դպրոցական ձեռագիր, մեքենագիր,

միօրյա տպագիր պարբերականները, որոնք, մամուլի որոշ մատենագետների կարծիքով, մամուլ չեն կարող համարվել և այդ պատճառով չեն ընդգրկվել մատենագիտական համահավաք ցանկերում: Շտեմարանի մաս են կազմում ՀՀ ազգային փոքրամասնությունների մամուլի անունները [«Հայ մամուլ» շտեմարան, Վիքիպեդիա]:

Հայաստանի ազգային գրադարանում այսօր շարունակվում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների ստեղծման աշխատանքները: Նպատակը՝ այս երկու շտեմարաններում հավաքել և ամբողջացնել հայ տպագիր գրքի և մամուլի պատմությունը, հեղինակների և խմբագիրների կենսագրականները, հրատարակիչների, տպագրիչների և տպարանների մասին տեղեկատվությունը: Հնարավոր բոլոր տարբերակներով (սքանավորում, ներբեռնում այլ կայքերից, նվիրատվություններ հեղինակներից) ձեռք են բերվում գրքերի և պարբերականների թվային պատճենները և կցվում են մատենագիտական գրառումներին՝ գիրքը կամ պարբերականը առցանց ընթերցելու համար [Զարգարյան, Ղազարյան, Գրիգորյան, 2017, 459]:

Ահա այսպիսի ծավալուն աշխատանք, որ կատարում է Հայաստանի ազգային գրադարանը, որն էլ իրենից ներկայացնում է հայ տպագիր գրքի և մամուլի գրատպության ուղին, անհրաժեշտ էր, որ իր տեղը գտներ Վիքիպեդիայում: Շտեմարանների հոդվածները մեծ պատասխանատվությամբ ստեղծվեցին: Ազգային գրադարանում կազմվեցին շտեմարանների բովանդակությունը և վիքիգրադարանավարի օգնությամբ Վիքիպեդիայի համապատասխան չափորոշիչներով տեղադրվեցին շտեմարանների մասին հոդվածներ: Շտեմարանների հոդվածներն ունեն հավաստի հղումներ՝ կառավարության որոշումներ [ՀՀ կառավարության որոշում, 31 հուլիսի 2014 թվականի N 777], հոդվածներ [Զարգարյան, Ղազարյան, Գրիգորյան, 2017, 459-470] և այլն: Այսպիսով՝ Ներսես Հայրապետյանի, Հայկանուշ Ղազարյանի և վիքիգրադարանավարի համատեղ աշխատանքի արդյունքում շտեմարաններն իրենց պատվավոր տեղը գտան Վիքիպեդիայում:

Ազգային գրադարանի տնօրենների հոդվածների ստեղծման համար նորից անհրաժեշտ էր գիտակ մասնագետի աշխատանք և խորհուրդ վիքիգրադարանավարներին: Այս հարցում օգնեց Ներսես Հայրապետյանը, ով տրամադրեց գրականություն, նկարներ: Ներսես Հայրապետյանը շատ արագ, խմբի ստեղծման պահից սկսած, գրադարանային վաստակաշատ գործիչների անուններ և թեմաներ էր առաջարկում («Ավետիք Օհանյան», «Հրաչյա, Կոստիկյան», «Նինել Ոսկանյան», «Հակոբ Մեղապարտ (հուշամեդալ)» և այլն) որոնց վրա պիտի աշխատեին վիքիգրադարանավարները: Առաջարկված հոդվածներն իրենց տեղը գտան Վիքիպեդիայում:

Ազգային գրադարանն իր պատմության ողջ ընթացքում կազմել է բազմաթիվ մատենագիտական ցանկեր, որոնց մեջ շատ կարևոր համարվեց հանդեսների մասին հոդվածներ ստեղծել Վիքիպեդիայում: Քանի որ հանդեսների բովանդակության մասին արդեն կար Վիքիպեդիայում, նրանց մատենագիտությունները ճիշտ չհամարվեց առանձին հոդվածով ներկայացնել, այլ որոշվեց առկա հոդվածի հարստացման և բարելավման ճանապարհով գնալ: Ընթացքում նաև բարելավվեցին հանդեսների մասին տեքստերը, որոնց բովանդակությունը շատ աղքատիկ էր ներկայացված Վիքիպեդիայում: Վիքիգրադարանավարները բարելավեցին բովանդակությունները և տեղադրեցին հանդեսների («Գործ» ամսագիր, Վիքիպեդիա], «Փորձ» [«Փորձ» ամսագիր, Վիքիպեդիա], «Լումա» [«Լումա» ամսագիր, Վիքիպեդիա], «Հյուսիսափայլ» [«Հյուսիսափայլ» ամսագիր], «Արաքս» Վիքիպեդիա [«Արաքս» ամսագիր, Վիքիպեդիա] և այլն) մատենագիտությունների բովանդակությունները: Վիքիպեդիան հնարավորություն է տալիս անընդմեջ բարելավումներ անելու: Քանի որ մատենագիտությունների բարելավումը ծավալուն աշխատանք է պահանջում, դրանք հարկավոր է ժամանակ առ ժամանակ լրացնել: Այժմ ազգային գրադարանի վիքիգրադարանավարները հանդեսների բարելավման վրա են աշխատում, որովհետև դրանք Վիքիպեդիայում իրենց արժանի չափով ներկայացված չեն:

Ազգային գրադարանի կազմակերպած դասընթացների արդյունքում Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» ֆակուլտետի դասախոսները և ուսանողները նույնպես ստեղծեցին իրենց հոդվածները Վիքիպեդիայում՝ «Դպրոցական գրադարան» [Դպրոցական գրադարան, Վիքիպեդիա], «Համայնքային գրադարան» [Համայնքային գրադարան, Վիքիպեդիա], «Հրաչյա Կոստիկյան» [Կոստիկյան Հրաչյա, Վիքիպեդիա]: Մանկավարժական համալսարանի դասախոսական կազմը գրադարանային համակարգում տարիների փորձ ունի, ուստի նրանք դեռ շատ մասնագիտական հոդվածներ կավելացնեն Վիքիպեդիայում:

Ժամանակակից գրադարանի գործառույթները այլևս նախկինը չեն, դրանք ունեն իրենց մեթոդներն ու աշխատանքային կանոնները, որոնք Վիքիպեդիայում ներկայացնելը շատ օգտակար կարող է լինել գրադարանավարների և ուսանողների համար: Որքան արագ Վիքիպեդիայում երևա Ազգային գրադարանն իր գործառույթներով, այնքան արագ կզարգանան համայնքային և գյուղական գրադարանները: Աշխատանքները դեռևս դանդաղ են առաջ գնում, իսկ անելիքները շատ են: Հուսով ենք, որ Ազգային գրադարանի վիքիականները հետևողական կլինեն և կշարունակեն աշխարհի ամենամեծ հանրագիտարանում արտացոլել գրադարանավարի հին և շնորհակալ մասնագիտության վերաբերյալ նյութերի լրացումը:

Ամփոփելով սույն հոդվածը, եզրակացնում եմ, որ ՀԱԳ աշխատանքները Վիքիպեդիայում կատարվում են մասնագետների ուղղորդությամբ: Բոլոր հոդվածներն ունեն հավաստի աղբյուրներ և մեկնաբանված են Վիքիպեդիայի կանոնների համաձայն: ՀԱԳ-ը Վիքիպեդիայում ունի որակյալ տեղեկատվություն գրադարանների, գրադարանային գործիչների և իր կատարած մատենագիտական ցանկերի ու շտեմարանների վերաբերյալ:

ՀԱԳ-ի նպատակն էր ցույց տալ, որ Վիքիպեդիայի նյութերը կարող են և պետք է օգտագործվեն առնվազն որևէ թեմայի վերաբերյալ առաջնային կամ սկզբնաղբյուր նյութեր գտնելու համար: Ընթերցողներին կարելի է ուղղորդել իրենց հարկավոր տեղեկությունը փնտրել Վիքիպեդիայում՝ ստացված տվյալները տպագիր հրատարակությունների միջոցով ճշտելու պայմանով:

SUMMARY

The National Library of Armenia initiated a collaboration with Wikimedia Armenia to support the creation of articles about libraries, librarians, and library science. Wikimedia Armenia organized a training series for NLA librarians on writing and editing articles for Wikipedia.

The purpose of the NLA team was to demonstrate that Wikipedia materials can and should be used to find primary and reliable source materials on any topic. Library users can be directed to search Wikipedia for the information they need, but before using it they should check and verify the information through print publications. Libraries should develop their Wikipedia presence to support and evolve local cultural info on Wikipedia to build stronger communities.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զարգարյան Տ., Ղազարյան Հ., Գրիգորյան Մ., Հայ տպագիր ժառանգությունը պատմության հոլովույթում // Կաճառ գիտական տարեգիրք, Երևան, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 459-470:
2. «Արաքս» հանդես. մատենագիտություն: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Արաքս_հանդես_մատենագիտություն, 12.05.2024:
3. «Գործ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Գործ_(ամսագիր,_Բաքու) 12.05.2024:

4. Գրադարանային ասոցիացաների հաստատությունների միջազգային դաշնություն: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Գրադարանային_ասոցիացաների_հաստատությունների_միջազգային_դաշնություն 12.05.2024:
5. Դպրոցական գրադարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Դպրոցական_գրադարան 10.05.2024:
6. «Լումա» հանդես, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Լումա_(հանդես) 10.05.2024:
7. Կոստիկյան Հրաչյա, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Հրաչյա_Կոստիկյան 13.05.2024:
8. Համայնքային գրադարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Համայնքային_գրադարան 10.05.2024:
9. «Հայ գիրք» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Հայ_գիրք_(շտեմարան) 10.05.2024:
10. «Հայ մամուլ» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Հայ_մամուլ_(շտեմարան) 11.05.2024:
11. «Հյուսիսափայլ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Հյուսիսափայլ_(ամսագիր) 11.05. 2024
12. Գրքի երախտավորներ: Կենսագրական համառոտ բառարան / Բ.Գ. Մելյան; Խմբ.՝ Ա.Ս. Մելյան; Երևան, Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկավարժ. համալս., 2002, 91 էջ:
13. «Փորձ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/Փորձ_(ամսագիր) 12.05.2024: